**«ՀԱԷԿ» ՓԲԸ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՊԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-9/25-03/63**

«ՀԱԷԿ» ՓԲԸ ЗАО «ААЭК» 03/63 (ОЗП) Գնման ընթացակարգերի բաժին Отдел закупочных процедур «05» 11 2025թ.

ք. Մեծամոր

**«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն**, ի դեմս գլխավոր տնօրենի տեղակալ - ընդհանուր հարցերի գծով տնօրեն Սամսոն Մաթևոսյանի, որը գործում է գլխավոր տնօրենի կողմից 05.05.2025 թվականին տրված լիազորագրի հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և

**«Ի Սի ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ և «ԴԻՍԻ-Տելեքոմ» ՍՊԸ Կոնսորցիումը**, ի դեմս «Ի Սի ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ տնօրեն Դավիթ Հակոբյանի և «ԴԻՍԻ-Տելեքոմ» ՍՊԸ տնօրեն Հրայր Բերբերյանի, որոնք գործում են «Ի Սի ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ և «ԴԻՍԻ-Տելեքոմ» ՍՊԸ-ի միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրի (կոնսորցիումի) և ընկերությունների կանոնադրությունների հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ՀԱԷԿ-ի օպերատիվ կապի սարքավորումների փոխարինման ծառայությունների մատուցման պարտավորություն** (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 եթե մատուցվել է պայմանագրի N 1 Հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 **Ողջամիտ ժամկետում տեղյակ պահել ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման պատասխանների արդյունքների վերաբերյալ և դրական եզրակացության դեպքում տրամադրել անցագրեր:**

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 **Ֆինանսական միջոցներ հատկացնելուց հետո՝ Համաձայնագիրը կնքելուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել ՀՀ կառավարության թիվ 744-Ն առ 09.06.2005թ ընդունած որոշման հիման վրա ատոմային էներգիայի անվտանգության տեսակետից կարևոր օբյեկտներում աշխատանքներ իրականացնող անձանց հուսալիության ստուգման համար անհրաժեշտ փաստաթղթերը: Կատարողի կողմից վերընշված փաստաթղթերի ներկայացման համար սահմանված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուն չի երաշխավորում 50 օրում անցագրերի տրամադրումը:**

2.4.5 **Պահպանել ՀԱԷԿ-ում գործող ներօբյեկտային և անցագրային ռեժիմի բոլոր պահանջները:**

## 3. ՍԱՐՔԵՐԻ, ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

3.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

3.2 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում, որը նշված է Տեխնիկական Պահանջի 3-րդ գլխի 3.3 կետի 3.3.4 ենթակետում, մատակարարված սարքավորումներում հայտնաբերվեն թերություններ, ապա Կատարողը պարտավոր է իր հաշվին վերացնել այդ թերությունները՝ Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետներում:

## 4. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **20 աշխատանքային օրվա** ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 5. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

5.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1 177 860 000 (մեկ միլիարդ մեկ հարյուր յոթանասունյոթ միլիոն ութ հարյուր վաթսուն)** ՀՀ դրամ, ներառյալ **ԱԱՀ - 196 310 000** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.1.1 Պայմանագրի գնից՝ մինչև **353 358 000 (երեք հարյուր հիսուներեք միլիոն երեք հարյուր հիսունութ հազար) (30%)** ՀՀ դրամը, Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի տեսքով կանխավճարի ապահովումը ներկայացնելուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում: Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կատարողին վճարումներ չեն կատարվում:

5.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է փաստացի ավարտված համակարգի հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (Հավելված N 2) նախատեսված ամսին (միջանկյալ վճարումներ չեն նախատեսվում):

Ընդ որում գնման դիմաց վճարումն իրականացվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

6.2 Պայմանագրի N 1 Հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի

Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

8.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

8.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

8.11 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու

դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է **25** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 3.1 և N 4 Հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

8.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված ծառայության մատուցման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կատարողի կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովումը փոխարինվում է երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի ապահովման փոխարինման դեպքում նաև նոր ապահովումը Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից **10 աշխատանքային օրվա** ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
**«ՀԱԷԿ» ՓԲԸ**

0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,
**Հ/Հ** 1930000199200100
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,
**ՀՎՀՀ** 04401874,
**Հեռ./ֆաքս՝** 28-18-80, 28-06-69,
**Հեռ.՝** 20-04-91,
**E-mail:** anpp@anpp.am

........................ **Ս. Մաթևոսյան**
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
**«Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ և «ԴԻՍԻ-Տելեքոմ» ՍՊԸ Կոնսորցիում**

**«Ի ՍԻ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ**

2224, գ.Զորաղբյուր, Կոտայքի մարզ,
Ամառանոցային փողոց 34,
**Հ/Հ** 16600202149000,
«ԷՎՈԿԱԲԱՆԿ» ՓԲԸ,
**ՀՎՀՀ** 01020365,
**Հեռ.՝** 055-23-33-30,
**E-mail:** info@ecenergy.am

........................ **Դ. Հակոբյան**
Կ.Տ

**«ԴԻՍԻ-Տելեքոմ» ՍՊԸ**

0046, ք.Երևան, Հ.Հովսեփյան 10/1, 27,
**Հ/Հ** 1930042174470100,
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ,
**ՀՎՀՀ** 00102283,
**Հեռ.՝** 010-42-14-33,
**E-mail:** info@dctelecom.am

........................ **Հ. Բերբերյան**
Կ.Տ

***Պայմանագրի կառավարիչ՝ Գարիկ Մարկոսյան,***
***հեռ. 010282960, email: garik.markosyan@anpp.am***

Հավելված N 1
« 05 » 11 2025թ. կնքված
ՀԷԿ-ԲՄԾՁԲ-9/25-03/63 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման հասցեն | մատուցման ժամկետը |
| 1 | 50331230 | **Համաձայն տեխնիկական պահանջի՝ հաստատված ՀԷԿ-ի ԳԾ-ի կողմից 19-ը ապրիլի 2023թ. Արխիվային գրանցում թիվ 469 կապարված 15-ը օգոստոսի 2023թ. (Հավելված 1,1)** | **լրակազմ** | **1177860000** | **1** | **Արմավիրի մարզ, ք. Մեծամոր «ՀԱԷԿ» ՓԲԸ** | **ֆինանսական միջոցների նախատեսման դեպքում, կնքվելիք համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 1-ը դեկտեմբերի 2026 թվական** |
| | | 1.1 Նախագծման աշխատանքներ | | 107 000 000 | | | |
| | | 1.2 Սարքերի, սարքավորումների մատակարարում | | 870 000 000 | | | |
| | | 1.3 Մոնտաժման աշխատանքներ | | 120 860 000 | | | |
| | | 1.4 Կարգաբերման աշխատանքներ | | 80 000 000 | | | |

**Լրացուցիչ պայմաններ՝**

1. Համաձայն Տեխնիկական պայմանների 3-րդ գլխի 3.7 կետի 3.7.14 ենթակետում նշված պահանջի DECT անլար հեռախոսակապի իրականացման համար պետք է հաշվի առնել ՀԷԿ-ի տեխնոլոգիական փարածքներում հաստ պատերի, խողովակաշարերի, մետաղական կոնստրուկցիաների և այլ խոչընդոտների առկայությունը՝ ինչպես նաև բարդ դասավորությամբ մեծ սենյակները, որոնք թուլացնում են DECT-ի ազդանշանը:
2. Օպերատիվ անձնակազմի աշխատավայրերում կապի երկարատև անջատումը բացառելու համար օպերատիվ համակարգի սարքավորումների փոխարինումը պետք է իրականացվի բաժանորդային սարքերի փուլային միգրացիայով՝ հին սարքավորումներից նորը: Ցանկալի է օպերատիվ համակարգի սարքավորումների տեղադրման աշխատանքները կազմակերպել 2026 թվականի պլանային նախազգուշական վերանորոգման (ՊՆՎ-2026) ընթացքում:
3. Երաշխիքային ժամկետ է սահմանվում 2 տարի (730 օրացուցային օր), որը կարգավորվում է Տեխնիկական պայմանների 3-րդ գլխի 3.3 կետի 3.3.4 և 3.13 կետի 3.13.1 ենթակետերով:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ | |
|---|---|---|
| «ՀԱԷԿ» ՓԲԸ | «Ի Սի ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ և «ԴԻՍԻ-Տելեքոմ» ՍՊԸ Կոնսորցիում | |
| | «Ի Սի ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ | «ԴԻՍԻ-Տելեքոմ» ՍՊԸ |
| Ս. Մաթևոսյան | Դ. Հակոբյան | Հ. Բերբերյան |
| Կ.Տ. | Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված N 1,1
« 05 » 11 2025թ. կնքված
ՀԱԷԿ-ԲՄԾՁԲ-9/25-03/63 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ
## ՀԱԷԿ-Ի ՕՊԵՐԱՏԻՎ ԿԱՊԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ

ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО
"АЙКАКАН АТОМАЙИН ЭЛЕКТРАКАЯН"
("АРМЯНСКАЯ АТОМНАЯ ЭЛЕКТРОСТАНЦИЯ")

УТВЕРЖДАЮ
Главный инженер ААЭС
________ Григорян А. Р.
13 . 04 ________ 2023г.

# ТЕХНИЧЕСКИЕ ТРЕБОВАНИЯ

## НА ЗАМЕНУ ОБОРУДОВАНИЯ СИСТЕМЫ ОПЕРАТИВНОЙ СВЯЗИ ААЭС

МЕЦАМОР

ВЫПУСК 1. 2023

| | Должность | Фамилия И. О. | Подпись | Дата |
|---|---|---|---|---|
| Проверил | НССДТУ | Акопян Г.Ж. | | 04.04.23 |
| Разработал | ЗН ССДТУ | Карапетян Э.В. | | 03.04.23. |

АРХИВ ЗАО «ААЭК»
Рег. № 469
от 15.08.23г.
Место хранения

ЗАО «ААЭК»
ОИТП ЭТД



# ЛИСТ СОГЛАСОВАНИЯ

| | Должность | Ф. И. О. | Подпись | Дата |
|---|---|---|---|---|
| Согласовано | ЗГИм | Чалоян Л. Г. | | 03.06.25 |
| Согласовано | ЗГИэ | Хлгатян Г. Х. | | 03.06.25 |
| Согласовано | НОЯБИН | Саргсян С. А. | | 05.06.2025 |
| Согласовано | НОИТП | Аршакян В. М. | | 03.06.25. |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |
| | | | | |

ЗАО "ААЭК" ПТО ЭТД

**ТЕХНИЧЕСКИЕ ТРЕБОВАНИЯ**
**НА ЗАМЕНУ ОБОРУДОВАНИЯ СИСТЕМЫ ОПЕРАТИВНОЙ СВЯЗИ ААЭС**

## СОДЕРЖАНИЕ


1 СОКРАЩЕНИЯ И ОБОЗНАЧЕНИЯ .......... 4

2 ОБЩИЕ СВЕДЕНИЯ И ЦЕЛЬ .......... 5

3 ТРЕБОВАНИЕ К СИСТЕМЕ ОПЕРАТИВНОЙ СВЯЗИ (ОС) .......... 6

4 УСЛУГИ, ОСУЩЕСТВЛЯЕМЫЕ ААЭС .......... 14

5 ПРАВИЛА СТАНДАРТЫ .......... 15

6 ПРИЛОЖЕНИЕ 1 .......... 15

ЗАО «ААЭК»
ОИТП ЭТД



# 1. СОКРАЩЕНИЯ И ОБОЗНАЧЕНИЯ

| | |
|---|---|
| **ААЭС** | Армянская атомная электростанция |
| **АВР** | устройства автоматического ввода резерва |
| **АРМ** | автоматизированное рабочее место |
| **АС** | атомная станция |
| **АТС** | автоматическая телефонная станция |
| **АЭС** | атомная электростанция |
| **ГГС** | громкоговорящая связь |
| **ГИ** | главный инженер |
| **ЗАО “ААЭК”** | закрытое акционерное общество “Айкакан атомайин электракаян” |
| **ИБП** | источники бесперебойного питания |
| **НСС** | начальник смены станции |
| **ОС** | оперативная связь |
| **СЛ** | соединительная линия |
| **ССДТУ** | служба средств диспетчерского и технологического управления |
| **ТТ** | технические требования |
| **ЦБ** | центральная батарея |
| **э/бл** | Энергоблок |

ЗАО «ААЗК»
ОНТП ЭТД

# 2. ОБЩИЕ СВЕДЕНИЯ И ЦЕЛЬ

## 2.1. ОБЩИЕ СВЕДЕНИЯ

2.1.1. Система оперативной связи представляет собой совокупность программно-технических средств, выполняющих определенные для нее функции в принятой для АС структуре диспетчерско-технологического, противоаварийного и административно-хозяйственного управления.

2.1.2. Оперативная связь предназначена для обеспечения устойчивого диспетчерско технологического и противоаварийного управления на АС и должна обеспечивать передачу команд начальника смены станции (НСС) оперативному персоналу основных пунктов управления, ведение переговоров между ними, оповещение и поиск персонала, а также автоматическую регистрацию и запись оперативных переговоров.

2.1.3. Средства ОС ССДТУ энергоблока №2 Армянской АЭС являются неотъемлемой частью оперативно-технологического управления ААЭС, оперативного обслуживания энергоблока, осуществления оперативного контроля за ведением заданного режима энергоблока.

2.1.4. Средства ОС предназначены для организации:
- ⇒ телефонной оперативной связи;
- ⇒ громкоговорящей оперативной связи;
- ⇒ радиотелефонной оперативной связи на территориях технологических помещений;
- ⇒ записи, хранения и обработки оперативных переговоров;
- ⇒ внешней связи по кабельным, радиорелейным, оптоволоконным линиям связи и линиям электропередачи.

2.1.5. Требованиями данной ТТ должны руководствоваться все организации и персонал, привлекаемый для реализации работ по данным ТТ.

## 2.2. ЦЕЛЬ

Целью настоящего документа является, приобретение оборудования для системы оперативной связи, выполнение работ по монтажу, настройке и обучение 2-х специалистов, предусмотренных п. 6.49 подпункт 1, приложения N2 к Решению Правительства Республики Армения N1597-А «О программе продления срока эксплуатации энергоблока №2 (ПСЭ-2) Закрытого Акционерного Общества «Айкакан атомайин электракаян» и об утверждении плана организации и реализации мероприятий, предусмотренных программой продления срока эксплуатации энергоблока (ПСЭ-2) №2 Закрытого Акционерного Общества «Айкакан атомайин электракаян» от 14 сентября 2023 года.

ЗАО «ААЗК»
ОНТП ЭТД

# 3. ТРЕБОВАНИЯ К СИСТЕМЕ ОС

## 3.1. ТРЕБОВАНИЯ К ИСПОЛНИТЕЛЮ

3.1.1. Исполнитель должен иметь опыт проектирования, монтажа, наладки цифрового оборудования объектов связи в энергетическом и особо важных секторах.

3.1.2. Исполнитель должен иметь соответствующую для данной работы квалификацию.

